

Սյունիքի մարզի համայնքներում կամ համայնքներն իրար միավորող ճանապարհներին ադրբեջանական զինված ծառայողների (նաեւ դրոշների ու ցուցանակների) առկայությունը, առավել եւս այդ ճանապարհներով նրանց յուրաքանչյուր տեղաշարժ պետք է բացառվի եւ վերջ:

Նրանք այդտեղ են հայտնվել Հայաստանի ու Արցախի խաղաղ բնակիչների եւ զինվորականների իրավունքների կոպիտ խախտումների, էթնիկ զտումների ու խաղաղ բնակավայրերը զանգվածային ավերելու, ինստիտուցիոնալ շարունակվող հայատյացության, խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքի, գերիներ ապօրինի պահելու ու նոր պատերազմի շարունակվող սպառնալիքների հաշվին:

Ադրբեջանական զինվորականների ներկայությամբ շարունակվում են կոպտորեն խախտվել Հայաստանի առաջին հերթին սահմանային բնակիչների իրավունքները կամ դրանք լրջորեն վտանգված են (սեփականության խախտումներ, կրակոցներ եւ այլն), խաղաղ կյանքն ու անդորրը:

Հետեւաբար, ինչ էլ ուզում է լինի՝ նրանց յուրաքանչյուր ներկայություն կամ առավել եւս տեղաշարժ ապօրինի է, զուրկ է իրավական որեւէ տիտղոսից, հակասում է միջազգային իրավունքում մարդու իրավունքների համակարգի հիմքերին:

ԱՐՄԱՆ ԹԱԹՅԱՆ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Զորքշարթի

24 փետրվարի 2021թ.

№ 4 (546)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՊԱՏԱՐԱԿԻԶ

«ՍՅՈՒՆԵՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԹԱԿ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63

(+374 91) 45 90 47

(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru

I SSN 1829-3468

2 1 0 0 4 >

9 771829 346006

Հրդեհի աստված, հրդեհ ու կրակ,
Օ, Վահագն արի: -

Տեսնում եմ ահա,

Որ ծիծաղում ու քրքշում են նրանք

Արնաբամ ընկած դիակիդ վրա:

Թե մի՞՞Ֆ էիր դու... Եկան, երգեցին

Մի հին իրիկուն գուսանները ծեր,

Որ հզոր ես դու, հրոտ, հրածին,

Որ դու կբերես փրկությունը մեր:

Եվ հավատացինք, հարբած

ու գինով,

Որ դու կաս՝ հզոր,

մարմնացում Ուժի՜ -

Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով

Մեր երկիրը հին դարձրին փոշի...

Եվ երբ քարշ տվին դիակդ

արնաբամ,

Որ նետեն քաղցած

ոհմակներին կեր -

Մեր կյանքի հիմներն

անդունդը ընկան

Եվ արնոտ միգում ճարճատում

են դեռ...

ԵՂԻՇԵ ՀԱՐԵՆՑ, 1916

Արցախի

դպրոցականները

Սյունիքում

Դեկտեմբեր ամիսն էր, անվտանգության նկատառումներով Տաթևի ճանապարհով էինք գնում Կապանից Երեւան: Ծանապարհին մի խումբ երեխաներ էին խաղում. զարմացա, բա՛նի որ դպրոցում պիտի լինեին:

Մի քանի օր անց լույս ճանապարհով վերադառնում էինք. լույս հատվածում հանդիպեցինք երեխաների լույս խմբին, մեքենան կանգնեցրիք:

– Փոքրիկներ, ինչո՞ւ դպրոցում չեք, – հարցրի:

Պատասխանեցին, որ դպրոց չեն գնում, քանի որ Արցախից են:

Երեխաների ասածը մտքիցս դուրս չէր գալիս. զանգահարեցի Արցախի տեղեկատվական կենտրոն:

– Կարո՞ղ եք ասել, թե ով է զբաղվում Արցախից տեղահանված երեխաների կրթության շարունակման հարցով:

Զրուցակիցս՝ Ռոբերտ Մաթեոսյանը, պատասխանեց.

– Կրթության բաժինները հրահանգել են տնօրեններին՝ ներկայացնել իրենց աշակերտների գտնվելու վայրն ու դպրոցը, որտեղ աշակերտները շարունակում են կրթությունը:

Գործընթացի մանրամասները փորձեցի ճշտել Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած դպրոցներից մեկի տնօրենի հետ զրույցում:

Ամբողջությամբ մեջբերում եմ պատասխանը.

– Տեղեկանք տանել-բերելու հարց դրված չէ, տվյալները լրացնում ենք՝ հիմք ընդունելով ծնողների խոսքը: Արցախից տեղահանված ընտանիքները սփռված են ամբողջ Հայաստանում: Ծնողների հետ զրուցում եմ, բացատրում, որ բոլոր դեպքերում, աշակերտը պետք է դպրոց հաճախի, երեխաներին դպրոց չտանելը պատճառաբանում են բնակության մշտական վայր չունենալով:

Խնդրի վերաբերյալ զրույց ունեցա Սյունի-

Հարունակությունը՝ էջ 8

Գորիսը Հայոց ազգային բանակ ճանապարհեց իր 25 զավակին. տարվա առաջին գորակոչը՝ համաժողովրդական տոնախմբությամբ եւ մատաղի արարողությամբ

Փետրվարի 14-ի օրը, անտարակույս, երկար ժամանակ կմա գորիսեցիների հիշողության մեջ. հարյուրավոր մարդիկ էին հավաքվել Վերիշենի Սուրբ Հռիփսիմե (Սուրբ Գրիգորիս) եկեղեցու բակում, հավաքվել էին Հայոց ազգային բանակ ճանապարհելու Գորիսի տարածաշրջանից 25 երիտասարդի: Եվ քանի որ Արցախյան երրորդ պատերազմից հետո առաջին գորակոչն էր, ուստի եւ արարողությունն էլ յուրահատուկ ընթացակարգ ունեցավ...

Տոնախմբությունը սկսվեց Հայոց ազգային բանակի օրհներգի՝ Ռոբերտ Ամիրխանյանի «Երազի իմ երկիր հայրենի»-ի հնչյունների ներքո:

Հանդիսավարը՝ Գորիսի մշակույթի կենտրոնի մեթոդիստ Լարինե Մինասյանը, արդարացիորեն ընդգծեց ներկա գորակոչի առանձնահատկությունն ու կարեւորությունը,

նր, երախտագիտության խոսքեր ասաց Հայոց Լահատակների մասին, որոնց հիշատակը հարգվեց մեկ րոպե լռությամբ:

Հարունակությունը՝ էջ 7

Ավելացվել է ռուս սահմանապահների եւս մեկ հենակետ. Սյունիքի մարզպետարան

15.02.2021

Փետրվարի 13-ին Սյունիքի մարզի Ագարակ գյուղի (Կապան համայնք) հարեանությունը արդրեջանական կողմից հնչել են անկանոն կրակոցներ դեպի օր: Փաստն արձանագրվել է հայ եւ ռուս սահմանապահների կողմից. վերջիններիս հրամանատարությունը մի քանի ժամ շարունակ դիտարկում է կատարել տարածքում, գրանցել միջադեպը, որից հետո տվյալ հատվածում ավելացվել է ռուս սահմանապահների եւս մեկ հենակետ, որտեղ այժմ շուրջօրյա հերթապահություն է իրականացվում: //

Գորիս-Դավիթ Բեկ ճանապարհահատվածում անվտանգությունն ապահովում են ՀՀ եւ ՌԴ սահմանապահները

11.02.2021 թ.

Գորիս-Դավիթ Բեկ ճանապարհահատվածում բաղաբաղիների տեղաշարժման, տրանսպորտային միջոցների, բեռների փոխադրման անվտանգությունն ապահովելու նպատակով ավտոճանապարհահատվածում տեղակայվել են Հայաստանի եւ Ռուսաստանի սահմանապահ ծառայությունների սահմանապահներ: Ինչպես տեղեկացրին ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, ՌԴ սահմանապահների կողմից վերոնշյալ ճանապարհների անվտանգության վերահսկողությունն ապահովելու պայմանավորվածություն ձեռք է բերվել ՀՀ եւ ՌԴ պաշտպանության նախարարների միջև:

«Ի պատասխան ՀԱՄՆ ներկայացուցիչների հարցումների՝ հարկ ենք համարում հիշեցնել, որ դեռեւս 2020թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հաղորդագրություն էր տարածել, որում մասնավորապես նշված էր.

«1. Համաձայն ձեռք բերված պայմանավորվածության՝ Գորիս-Դավիթ Բեկ ճանապարհային հատվածում երթևեկության անխափանության նկատառումներով տեղակայվում են ռուս սահմանապահ ուժեր:

2. Գորիս-Կապան ավտոճանապարհի 21կմ երկարությամբ հատվածի անվտանգությունը, որն անցնում է վիճարկելի տարածքով, կապահովվի ռուս սահմանապահների միջոցով:

3. Շփման գծի մի կողմում կտեղակայվեն ՀՀ սահմանապահ զորքեր՝ Հայաստանի կողմից, Ադրբեջանի սահմանապահ զորքերը՝ Ադրբեջանի կողմից:

Նշված ճանապարհահատվածի անվտանգությունն ապահովելու նպատակով ձեռնարկվելու են անհրաժեշտ համալիր միջոցառումներ»:

Այսպիսով, վերոնշյալ համալիր միջոցառումների շրջանակներում բաղաբաղիների տեղաշարժման, տրանսպորտային միջոցների, բեռների փոխադրման անվտանգությունն ապահովելու նպատակով ավտոճանապարհահատվածում տեղակայվել են Հայաստանի եւ Ռուսաստանի սահմանապահ ծառայությունները: ՌԴ սահմանապահների կողմից վերոնշյալ ճանապարհների անվտանգության վերահսկողությունն ապահովելու պայմանավորվածություն ձեռք է բերվել ՀՀ եւ ՌԴ պաշտպանության նախարարների միջև», – ասվում է հաղորդագրության մեջ: //




Արման Թաթոյանը եւ Գեւորգ Փարսյանը Կապան համայնքի Շիկահող եւ Սրաշեն գյուղերում էին

Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի գլխավորած աշխատանքային խումբը փետրվարի 16-ին հանդիպումներ է ունեցել Կապան համայնքի Շիկահող եւ Սրաշեն գյուղերում:

Քննարկվել բնակիչների անվտանգության, սեփականության, արտադարյան եւ վարելահողերի օգտագործման եւ այլ հարցեր:

Ադրբեջանցիները երկու կողմից մոտեցել են Ագարակին՝ մի կողմից դիրքերը մոտեցրել են 4 կմ, մյուս կողմից՝ 1 կմ, հնչում են կրակոցներ



15.02.2021

«Ադրբեջանցիները պարբերաբար կրակոցներ են արձակում», – այս մասին «Փաստինֆո»-ի հետ զրուցում հայտնեց Ագարակի գյուղապետ Հայկ Սահակյանը՝ հավելելով, որ դրանք անկանոն են՝ դեպի օր:

«Միշտ էլ պրոպեգանդա է եղել, մի ժամանակ հանգիստ էր, իսկ հիմա նորից են սկսել», – ասաց Սահակյանը՝ նշելով, որ թեեւ կրակոցները վտանգավոր չեն, բայց բնակիչներն անհանգստանում են:

Ադրբեջանցի զինծառայողները Սյունիքի գյուղերի անմիջական հարեանությամբ կրակում են ինչպես փոքր, այնպես էլ խոշոր տրամաչափի զինատեսակներից՝ տարբեր ժամերի: Այս մասին փաստող տեսանյութն



ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ
Ագարակի
գյուղապետ

արվել է երկու օր առաջ: Կրակոցների վայրից դեպի Ագարակ գյուղ ուղիղ գծով մոտ 1 կմ է: Սահակյանը տեղեկացրեց, որ գյուղի ներքեւի հատվածում հենց այդքան հեռավորության

վրա է թշնամին, իսկ գյուղի վերելի հատվածից արդրեջանցիները կրկին առաջ են եկել՝ հիմա 4 կմ-ի վրայից են հսկում սահմանները:

«Երբ իրենք խոսում են՝ գյուղում լսվում է: Երեկ չէ առաջին օրը նորից առաջ են եկել, գյուղի վերելի հատվածում տեղակայվել են: Չորս կմ հեռու են՝ գյուղի գլխավերեւում: Միևեւ առաջ գալը բավականին հեռու էին, հիմա եկել են գծի վրա ստեղծել: Սահմանապահներ ունենք, ռուսները եւս շուրջօրյա հերթապահում են արդեն երկու օր է: Առաջ են եկել ռուսի թույլտվությամբ մեր սահմանով անցել են եկել իրենց գծի վրա կանգնել են: Մենք էլ գյուղեր ունենք, որ ճանապարհներն իրենց սահմանով է անցնում, թույլատրում են, անցնում են: Մեկ կմ էլ ներքեւի հատվածից են հեռու»:

Ագարակի խնդիրների մասին վաղուց են բարձրաձայնում, հիմնականում որսորդական զենք կրելու թույլտվության հարցն են բարձրաձայնում, որ գյուղի բնակիչները ինքնապաշտպանության համար զենք ունենան, սակայն չունեն ու դա, իրենց կարծիքով, լուրջ խնդիր է:

Ագարակում 40 տուն կա, նախկինում գյուղի մաս հանդիսացող տարածքները հիմա դիրքերի են վերածվել: Իշխանություններից օգնություն չեն առաջարկել, գյուղին աջակցում է միայն համայնքապետը:

Ագարակի հիմնական ճանապարհը եւս փակվել է: Նոյեմբերի 10-ից հետո ճանապարհի 4 կմ-ն անցել է Ադրբեջանին, ու բնակիչները ստիպված այլընտրանքային ճանապարհից են օգտվում՝ 6,5 կմ երկար ճանապարհ անցնում, որն անմիջապես վիճակում է:

«Նախկինում ավելի վատ վիճակում էր, համայնքապետը վերանորոգել է ինչպես հնարավոր է»:

ՓԱՍՏԻՆՖՈ

Սյունիքի տարածաշրջանում Հայաստան-Իրան ուղղակի ճանապարհային կապին մի քանի վտանգ է սպառնում. Վարդան Ոսկանյան

13.02.202 // 168.am-ի գրուցակիցն է **ԵՊՀ իրա-նագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանը**:

— Պարոն Ոսկանյան, տարածաշրջանում հաղորդակցության ուղիների ապաշրջափակման կոնտեքստում Ադրբեջանին պետք է ճանապարհի դեպի Նախիջևան եւ Թուրքիա, որը նա ստանում է եռակողմ հայտարարության արդյունքում, իսկ Հայաստանին՝ ելքեր դեպի Ռուսաստան եւ Իրան: Ռուսական եւ աբխազական կողմերը մամուլում սկսել են քննարկել Աբխազական երկաթուղու վերագործարկման հարցը: Ընդհանրապես Հայաստանի համար Նախաստավոր ինչ ուղիներ կարող են քննարկվել Իրանի եւ Ռուսաստանի հետ կապ ստանալու համատեքստում, որոնք ընդունելի են Նաեւ Իրանի համար:

— Կարծում եմ, որ Հայաստանի համար առնվազն, որպես առաջնահերթություն, Իրանի հետ կապի կոնտեքստում պետք է սահմանվի Սյունիքի մարզը, այսինքն՝ որեւէ պարագայում չպետք է Սյունիքի մարզով Իրանի հետ ուղղակի հաղորդակցությունը կտրելն որեւէ այլ պայմանավորվածությունների հետեւանքով: Դա մեզ համար ունի ոչ միայն տնտեսական, այլեւ անվտանգային նշանակություն, ուստի Հայաստան-Իրան Սյունիքի մարզի միջոցով հաղոր-



դակցությունը պետք է դիտարկել ուղղակի զուգահեռ ճանապարհներ, ոչ թե այլընտրանքներ:

Այդպիսի երկաթուղային ճանապարհ կարող է լինել, բնականաբար, Նախիջևանով, եւ, դատելով իրանական կողմի հայտարարություններից՝ իրանցիները կարծես թե կողմ են: Խոսքն իրանական Տուվա-Նախիջևանյան Տուվա-Երասխ-Երեւան երկաթուղագծի մասին է:

Ինչ վերաբերում է որեւէ միջանցքի, ապա նրանք դեմ են միջանցքի ստեղծմանը, խոսքը վերաբերում է Նախիջևանը մնացյալ Ադրբեջանին կապող հաղորդակցությանը, որը, ենթադրվում է՝ լինելու է փաստացի միջանցք: Իրանցիները հստակ հայտարարում են, որ դեմ են որեւէ միջանցքի, որը կանցնի

Իրանի սահմանի երկայնքով՝ Հայաստանի տարածքով, բայց կողմ են հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, եւ այդ համատեքստում Իրանի համար հատկապես հետաքրքրություն է ներկայացնում երկաթուղու Նախիջևանյան հատվածը, ինչն Իրանին հնարավորություն կտա Հայաստանի վրայով ելք ապահովել դեպի սեւծովյան նավահանգիստներ:

Ռուսական կողմը խիստ շահագրգիռ է եւ որոշակի ջանքեր է գործադրում, որպեսզի բացվի Աբխազական երկաթուղու հատվածը, որն ունի երկու միտում:

Առաջինը՝ բնականաբար, Հայաստանի հետ երկաթուղային հաղորդակցության հաստատումն է, որը, ըստ էության, գրեթե կգրո-

Հարունակությունը էջ 8

Կառավարությունը նախատեսում է այլընտրանքային ճանապարհներ կառուցել Սյունիքի մարզում

Սյունիքում նոր ճանապարհների անհրաժեշտության, զբոսաշրջային ուղիների բարեկարգման, նույնիսկ 9-ի հայտարարությամբ պայմանավորված Ադրբեջանի եւ Նախիջևանի միջեւ ճանապարհի գործարկման ժամկետների եւ այլ հրապարակ հարցերի շուրջ «Արմենպրես»-ը գրուցել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի հետ:

— Պարոն Պապիկյան, մինչ տարվա ճանապարհաշինարարական աշխատանքներն ամփոփելը, կիսնորեմ անդրադառնանք Սյունիքում ստեղծված իրավիճակին: Նոր իրողություններով պայմանավորված, մի շարք համայնքներում, անվտանգությունից ելնելով շրջանցիկ ճանապարհների անհրաժեշտություն է առաջացել: Նախարարությունն արդյո՞ք ուսումնասիրել է խնդիրը, եթե այո, ապա ի՞նչ պատկեր ունենք:

— Այսօր շատ կարեւոր է Սյունիքում այլընտրանքային ճանապարհներ ունենալը: Գործող ճանապարհների այն հատվածները, որոնք դուրս են մնում Հայաստանի տարածքից, այլընտրանքային ուղիների անհրաժեշտություն ունեն: Ժամանակին, ռեյիեֆով պայմանավորված, օգտագործվել են ավելի հարմար հատվածները եւ ճանապարհն այդ սկզբունքով է կառուցվել: Նաեւ խորհրդային տարիներին երկու հանրապետությունների տարածքներով անցնելու խնդիր չի եղել: Միգուցե դրանով պայմանավորված են այդպես կառուցել կամ գուցե եղել է խորհրդային Միության քաղաքականությունը:

Ասեմ, որ Սյունիքի մարզպետի միջնորդությամբ, առաջարկությամբ, անցկացրել



ենք քննարկումներ եւ որոշում ենք ընդունել վերակառուցել Տաթև-Աղվանի-Կապան ճանապարհը: Սա Կապան տանող այլընտրանքային ճանապարհ է, որի շինարարական աշխատանքները 2020 թվականին 12.5 կմ հատվածի վրա կատարվել են: Մինչ այդ՝ դեռ 2016 թվականին, մեկնարկել էր ու 2018-ին ավարտվել էր եւս 6 կմ ճանապարհի շինարարական աշխատանք: Մեր իշխանության շրջանում կառուցվել է 6 կմ, գումարած 12.5 կմ հատված: Ճանապարհի զբոսաշրջային հատվածի որոշումն ընդունվել է մեզից առաջ, մենք դրա շարունակականությունն ենք ապահովել: 2020 թվականին, ինչպես նշեցի, մենք կառուցել ենք 12.5 կմ հատվածը, որը Տաթև-Աղվանի ճանապարհահատվածն է եւ Տաթև-Կապան ճանապարհի ընդամենը մի կտորը: Մնացածի մասով, շուրջ 21 կմ հատվածի աշխատանքները կարվեն արդեն 2021 թվականին: Հաշվի առնելով ներկա իրո-

դությունները՝ մենք նախագծային աշխատանքներ կատարելիս որոշակի փոփոխություններ ենք կատարում Նաեւ չափորոշիչների մեջ, որպեսզի ճանապարհի կարգը, լայնքը վերանայվեն: Այնպիսի ճանապարհ լինի, որ անհրաժեշտության դեպքում կարողանան անցնել բեռնատար ավտոմեքենաները:

— Ո՞ր այլ ուղղություններով են ճանապարհների հետ կապված խնդիրներ առաջացել եւ ի՞նչ լուծումներ եք առաջարկում: Օրինակ, Կապան համայնքի ղեկավարը որպես խնդրահարույց առանձնացրել էր Կապան-Գորիս, Կապան-Ճակատեն եւ Կապան-Ագարակ ուղղությունները:

— Ներկա պայմաններում առաջացել են խնդիրներ Գորիս-Կապան ուղղությամբ, այնտեղ 5 հատված կա, որտեղ ճանապարհը մուտք է գործում հարեւան երկրի տարածք եւ կրկին մտնում Հայաստանի տարածք: Ես նշեցի, որ դա պայմանավորված է եղել Նաեւ ռեյիեֆով: Այս ուղղությամբ արդեն հանձնարարական կա, որ այս ճանապարհի երկայնքով նույնպես հնարավոր այլընտրանքային հատվածներ գտնվեն, որպեսզի ամբողջ ճանապարհահատվածն անցկացնենք Հայաստանի Հանրապետության տարածքով: Սա մի քիչ բարդ է, որովհետեւ ունենք դժվարանցանելի հատվածներ: Չեմ բացառում, որ անհրաժեշտություն ունենանք թունելային լուծումների: Խնդիր կա Նաեւ Կապան-Ագարակ ճանապարհահատվածում: Այս ուղղությամբ կա այլընտրանքային ճանապարհ, որը գրունտային է: Հիմա իմ կողմից կա հանձնարարական՝ նախագծման աշխատանքներ սկսել ու ճանապարհը վերակառուցել: Չնայած անցանելիությունն ապահովվում է, գյուղ հասնելու խնդիր չկա, բայց մենք ամեն ինչ կանենք, որ 2021-ին հնարավոր լինի անցնել ասֆալտապատ ճանապարհով:

Ինչ վերաբերում է Կապան-Ճակատեն հատվածին, ապա այն վերահսկվում է ռուս սահմանապահների կողմից, ինչպես Գորիս-Կապանի 21 կմ հատվածը: Այս փուլում այնտեղ անցանելիության խնդիր չկա:

Պատերազմն ավերածություններ է սփռում ոչ միայն մարտի դաշտում

Պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ վերլուծաբանները կանխատեսում էին տնտեսական կոլապս եւ գնաճ: Եթե տնտեսական փլուզման երեւույթները հասարակ մահկանացուների տեսանելի չեն, ապա այս երկրորդը (գնաճը) շարքային քաղաքացիներն իրենց մաշկի վրա գզացին Ամանորից անմիջապես հետո, երբ թիվ մեկ սննդամթերքի՝ հացի եւ այլուրով պատրաստվող մթերքների գները բարձրացան. հացը թանկացավ 20 դրամով, լավաշը՝ 10 դրամով: Թանկացավ Նաեւ հրուշակեղենը՝ հիսնականում թխվածքները, կիլոգրամով վաճառվողները՝ 20, հատով վաճառվողները՝ 10 դրամով: Թեման ուսումնասիրելիս Նաեւ մի իրողության ենք բախվում, որ հացը թխվում է եւ գնորդներին է հասնում երբեմն նախատեսված քաշից 30-40 գրամով պակաս:

Ապրանքների թանկացման վրա հիմնականում երկու գործոն է ազդել՝ միջազգային շուկայում գների բարձրացումը եւ հայկական դրամի արժեզրկումը դոլարի նկատմամբ. դոլարի փոխարժեքը պատերազմից առաջ 484 դրամ էր (սեպտեմբերի 26-ի դրությամբ), այժմ կազմում է 524 դրամ: Թանկացել են Նաեւ այլ ապրանքատեսակներ՝ ձեթը, շաքարավազը, կաթնամթերքը, հիգիենայի որոշ պարագաներ եւ այլն: Մարդկանց գրպանին խփող այս անցանկալի երեւույթը նկատվեց դեղորայքային շուկայում, ինչը Նաեւ առաջին անհրաժեշտության ապրանքների թվին կառելի է դասել:




Հացի թանկացման կապակցությամբ Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը քննարկում է ունեցել մարզկենտրոնի հացարտադրողների հետ: Վերջիններս գնի բարձրացումը եւս հիմնավորել են նշված գործոններով՝ այլուրի թանկացում եւ դոլարի արժեւորում դրամի նկատմամբ: Համայնքապետին փոխանցել են, որ արտադրվող հացի ինքնարժեքը բարձրացել է 30 դրամով: Ի վերջո եկել են համաձայնության՝ հացի (մատնաբաշ) գինն ավելանա 20 դրամով՝ 220-ից դառնալով 240 դրամ: Ինչեւէ, հիմա հարցերի հարցն այն է, թե ե՞րբ նշվածները կվերադառնան Նախկին գների եւ կլինի՞ արդյոք նշված մթերքների կամ որ միեւնույն է՝ առաջին անհրաժեշտության ապրանքների էժանացում:

Վիճակագրական կոմիտեն հրապարակել է սպառողական գների ինդեքսը, որից տեղեկանում ենք, որ 2021-ի հունվարին անցած տարվա հունվարի համեմատությամբ գնաճը կազմել է 4,5 տոկոս, իսկ միայն սննդամթերքի եւ ոչ ակոհոլային խմիչքների ինդեքսների գնաճը՝ 6,4 տոկոս:

Մեզ հետաքրքրող ապրանքներից արեւածաղկի բուսական յուղի գինն անցած տարվա համեմատ աճել է 44,3, հացի գինը՝ 26,4 տոկոսով, շաքարինը եւ շաքարավազինը՝ 40,7 տոկոս եւ այլն: Ի դեպ, բարձրացել են մրգերի եւ բանջարեղենի գները:

Այս ամենին բուռն անդրադարձ չեղավ բնակչության շրջանում: Մարդիկ պարզապես դուրս չեն եկել պատերազմի պատճառած շուկից...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



Սիսական աշխարհի Մեղրի աննվաճ ամրոցը եւ հարավային դարպասը՝ սերունդների արյամբ դարերով պաշտպանված ու սրբագործված, թուրքի կոխան դարձնելու փորձ է արվում

2021 թ. հունվարի 11-ը հայ ժողովրդի պատմության մեջ մտավ իբրեւ հայոց պետականությունն ու ինքնիշխանությունը կործանման ռեժիմի վրա փոխադրելուն միտված նոր սկիզբ (2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից հետո):

2021 թ. հունվարի 11-ը հայոց պատմության մեջ մտավ իբրեւ Սյունյաց աշխարհն իր երբեմնի փառքից, վեհությունից ու ռազմավարական նշանակությունից զրկելու հերթական հանգրվան:

Նիկոլ Փաշինյանի, Վլադիմիր Պուտինի եւ Իլհամ Ալիևի հանդիպման արդյունքում այդ օրն ընդունված համատեղ հայտարարությունը վերոնշյալ ծրագրերը կյանքի կոչելու ճանապարհային քարտեզի մանրամասների յուրօրինակ հանրագումար է:

Եվ, այդուհանդերձ, հունվարի 11-ի եռակողմ հայտարարության վերաբերյալ օրվա իշխանական թիմն այլ կարծիք ունի, փորձագետներն ու Սյունիքի իրական շահերով մտահոգները, նաեւ այստեղ բնակվողները մեկ այլ տեսակետ ունեն:

Ի՞նչ ունենք կամ կունենանք մոտ ապագայում, եթե այդ ծրագրերն իրագործվեն, եւ ինչո՞ւ այսպես ստացվեց:

Նախ՝ Հայաստանի Հանրապետության հարգելի նախագահներ Լեւոն Տեր Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան...

Ձեր առաջնորդությամբ այդ ի՞նչ պետություն կառուցեցինք, որ ինչ-որ պատահականություններ հաջողեցին երկու տարվա ընթացքում հայոց պետականությունը մոցնել փակուղի:

Այդ ի՞նչ պետություն կառուցեցինք, որի հայացքի ներքո կամ որի ջատագովությամբ հօդս ցնդեց Արցախյան երազանքը, որ հազարամյակների պատմության մեջ հայոց ամենամկրիթական երազանքներից էր...

Հարգելի Սերժ Ազատի, այդ ի՞նչ սահմանադրություն պարտադրեցիք Հայաստանի երրորդ հանրապետությանը, որ հայոց պետության եւ պետականության օրհասի ժամին երկիրը փրկելու իրական եւ ողջամիտ ուղի չի

Դեռեւս 2014-ից մարզում ներդրված հրոսակախումբը, որը հայոց արեւելյան կողմերում իրեն պետություն է հռչակել եւ իր դաժանությամբ թուրքին չի զիջում, պատրաստ է նոր գործողությունների, եթե հայոց պետությունը եւ երկրի օրվա իշխանավորները համարձակվեն խոչընդոտներ հարուցել Սյունիքն ասպատակելու գործին:

մատնանշում...

Հայաստանյան՝ մոտ հարյուրի հասնող հարգելի կուսակցություններ, կուսակցապետեր, մի՞թե դուք իրականում չկաք եւ մի՞ք եք կամ ուղեղային մորմոք, այսպես ինչպե՞ս հաջողեցին մեզ այսչափ նվաստացնել ու ստորացնել:

Միայն թե չասեք, թե ժողովուրդը նոյեմբերի 9-ից հետո դուրս չեկավ փողոց:

Ժողովուրդն իր ցատումն արտահայտեց ավելի ցայտուն եւ հուժկու, նաեւ ավելի վճռական, քան երբեք: Մարդիկ, իբրեւ դժգոհության բացառիկ արտահայտություն, իրենց սրբության սրբոց հայրենական տներն էին նույնիսկ հրկիզում, բայց դուք (իշխանավորների հանգույն) նրանց համարում էիք եւ համարում եք ոչ դժգոհ ու պասիվ, քանի որ Շուռնուխից, Որոտանից կամ Բերձորից չէին հասնում Երեւան ու միանում փողոցով քայլողներին:

Դուք (ունենալով Վազգեն Մանուկյան փորձառու առաջնորդ) չկարողացաք նոյեմբերի 9-ից հետո փողոցում ընկած եւ տեղ չունեցող իշխանությունը վերցնել, բանգի (ինչպես հիշեցնում էիք եւ հիշեցնում եք անընդհատ) իշխանություն չեք ուզում, որովհետեւ սահմանադրական ճանապարհով եք գործընթացն առաջնորդում:

Այդ ե՞րբ եք ուղղափառ օրինապահներ դարձել այդչափ. երկիրը հանձնելուց, մեր ինքնիշխանության ողնաշարը կտրելուց, մեր լավագույն զավակներին կառավարարն քշելուց եւ մեր ազգային գենոֆոնդի ծաղիկը ոչնչացնելուց, Սյունիքը ներքին թուրքին հանձնելուց չէիք հիշում սահմանադրությունը՝ սպասողական կեցվածք ընդունելով, բայց

հիմա քաղաքակիրթ, բարեկիրթ ու օրինապահ եք դարձել:

Այդ ի՞նչ շինծու արտահայտություններ եք հորինել ու դրանցից կախվել՝ «կրիտիկական զանգված», «հանրային պահանջ»... Մի՞թե 1945-ին Ռայխստագի բակում «կրիտիկական զանգված» էր հավաքվել, որի ճշմարիտ Արդիֆ Ֆիտեր չարիքը գիտակցեց իր մեղքն ու ինքնասպան եղավ:

Հայոց զինված ուժեր, որքան էինք հպարտանում ձեզանով, դուք մեզ համար ասես սրբություն լինեիք, բայց հիմա... Ռ՝ւր է պատերազմական օրերի ձեր ոչ բարով նախարարը, որ պատերազմի դեպքում նոր տարածքներ էր մեզ խոստանում՝ Խնձորեսկի ճոճվող կամրջի վրա թռնոտի տալով:

Ռ՝ւր են մեր գեներալները, իրամանատարները՝ Օնիկ Գասպարյանի եւ Վաղարշակի կողմից առաջնորդվող, որոնց համար ազգային արժանապատվությունը, սպայի պատիվը, թվում է, վեհ պիտի լինեին ամեն ինչից:

Հարգելի ԵՎՄ-ականներ, Ռ՝ւր եք եւ Ռ՝ւր էիք... Ձեր մարտական ընկերների արյամբ սրբացած հայրենիքը հանձնվեց, ձեր մարտական ընկերների հիշատակը պղծվեց, իսկ դուք... Մի՞թե դուք նույնպես մի՞ք էիք: Այդ ինչպե՞ս ստացվեց, որ պատերազմական ծանր օրերին ձեր անունը չսվեց գեթ մեկ անգամ:

Հիշո՞ւմ եք, թե ինչպես էին հայ առաքելական ֆիդայապետերին Մեծ եղեռնից առաջ հալածում-մորթում թուրքերը: Մի՞թե այդպես չվարվեցինք Արցախյան 1-ին պատերազմի մեր հերոսների հետ, որ ժամանակին ձեր իրամանատարներն էին, ձեր ոգեշնչման աղբյուրը...

Հայոց պետական այրեր, այդ ինչպե՞ս եք կարողանում ձեր չգոյության ժամին ձեռք մեկնել եւ պարզեալվածարներ ստանալ սեփական անբանության համար, երբ խնդրահարույց է հարյուրավոր հայ գերիների եւ անհետ կորած մեր քաջորդիների ճակատագրերը...

Ազգային ժողովի՝ այսպես կոչված ընդդիմադիր խմբակցություններ... Պատկերացնել կարելի է, թե քանի-քանի հազար մարդ դուրս կհանվեր փողոց, եթե հանկարծ հարկայինի տեսուչը սխալմամբ մոտեր հայտնի մարդու օբյեկտներից մեկը:

Հարգելի մտավորականներ, Ռ՝ւր էիք եւ որտե՞ղ եք հիմա... Արցախյան շարժման սկզբում Վիկտոր Համբարձումյանը, Սոս Սարգսյանը, Սերո Խանգաղյանը, Սիլվա Կապուտիկյանը եւ մյուս երեւելիներն էին իրենց սիրալից վարքով հաղթանակի ճանապարհ ցուցանում ազգին, իսկ այսօր... Ովքե՞ր են նրանց փոխարինել կամ փոխարինում ազգային երազանքներից իյուսված-շինված հայոց պատվանդաններին...

Իսկ Սյունիքում...

Պատերազմի վերջին փուլի իրադարձությունները (Սյունիքին առնչվող) եւ հետպատերազմյան զարգացումները (Սյունիքի շուրջ), կամա թե ականա, ամենավատ ենթադրությունների ու կասկածների տեղիք են տալիս: Եվ նման առեղծվածային զարգացումների շղթան, կարծեք, ընդհատվելու միտում չունի՝ խտացնելով անորոշության մշուշը:

Փետրվարի 13-14-ին Ազարակի ուղղությամբ թուրքերից կրակահերթեր էինք լսում, իսկ դրանից մի քանի օր առաջ հակաայունիքյան ինչ-որ հուշագիր գաղտնագրեծվեց...

Մինչդեռ հայտնի «ակտիվիստները» ցույցեր անելու, ճանապարհներ փակելու, սահմանային գյուղերից «սեյֆի» անելու նոր հանձնարարական չեն ստանում չարիքի որջից:

Դեռեւս 2014-ից մարզում ներդրված հրոսակախումբը, որը հայոց արեւելյան կողմերում իրեն պետություն է հռչակել եւ իր դաժանությամբ թուրքին չի զիջում, պատրաստ է նոր գործողությունների, եթե հայոց պետությունը եւ երկրի օրվա իշխանավորները համարձակվեն խոչընդոտներ հարուցել Սյունիքն ասպատակելու գործին:

Հայտնի գիժը՝ Հոկտեմբերի 27-ից հետո թեւավորված, մեր բակային ակտիվիստներից մի քանիսին հռչակել է մերօրյա Գարեգին Նժդեհ-ներ՝ պղծելով մեծագույն հայերից այդ մեկի հիշատակը նույնպես...

Սրբալիզծ պատգամավորը, հանուն իր մանդատի եւ պարզեալվածարի, մայրաքաղաքային հարթակներից՝ անդամահատված Շուռնուխի, Որոտանի եւ սահմանային մյուս բնակավայրերի մասին կրկնում է նույն կադկանձը, ինչ թուրքերն են հիշեցնում:

Գորիս-Կապան մայրուղու մերձակա գրեթե բոլոր իշխող եւ տեսանելի բարձունքներում թուրք-ազերիների մարտական դիրքերն են, որոնց շուրջօրյա նշանառության ներքո երթեւեկում են մեր վարորդներն ու ուղեւորները: Այդ վայրերում՝ թշնամու դիրքերից լավող կրակահերթերը, կարծեք, մեր առօրյայի անբաժանելի մասն են դարձել:

Գորիս-Կապան մայրուղու առնվազն երեք-չորս հատվածում աղբբեջանցի զինյալներն են մեզ «դիմավորում» (Եվազար, Որոտանի մուտք, Թասի ոլորանների վերջնամաս՝ Մագրա գնացող ճանապարհի խաչմերուկ, Շուռնուխ):

Գորիս-Կապան մայրուղու երկու հատվածում՝ ազերիների լեզվով գրառումներով վահանակները «Բարի գալուստ Աղբբեջան» արտահայտությամբ են մեզ «ողջունում»:

Գորիս-Կապան մայրուղու, ինչպես եւ Կապան-Շավ (Մ-17) մայրուղու արեւելյան բարձունքներում, նաեւ Կապան համայնքի հարավային ու հարավ-արեւելյան եզերքին, Խոզնավար, Վաղատուր, Խանաձախ, Ներքին Խնձորեսկ գյուղերի մոտակայքում ծածանվում է Աղբբեջանի պետական դրոշը:

Կապանից Ուժանիս, Եղվարդ եւ Ազարակ ձգվող ասֆալտապատ ճանապարհն այլեւս աղբբեջանական Սեփուր գյուղի տարածք է, եւ մարդիկ այդ գյուղեր այցելում են Վերին Գյուղաբլուի տարածքով՝ շրջանցող դաշտային ճանապարհով:

Առաջիկա օրերին մարզի հարթավայրային եւ ցածրադիր գոտիներում գարնան գյուղատնտեսական աշխատանքները պետք է մեկնարկեն: Մինչդեռ հարյուրավոր հեկտար դաշտեր եւ այգիներ մշակելու համար գյուղացին դեռեւս անվտանգության երաշխիքներ չի ստանում:

Ն Սպասումներ կան Նոնաձորի (Նյու-վադիի) ապագայի հարցում. դեռեւս 1929-ին Մեծ Ալ լճի հետ փոխանակելու հետեւանքով Հայաստանի տարածքում հայտնված գյուղն արդյո՞ք կմնա մեր ենթակայության տակ, թե՞ Ադրբեջանը կթափ նաեւ Նշված փոխանակման փաստի վրա ու GPS-ով կգա Նոնաձոր:

Այս պահի դրությամբ արժանահավատ տեղեկություններ չկան Սյունիքի սահմանափակ արտավայրերի կարգավիճակի մասին՝ Մեծ Իշխանասարի հյուսիս-արեւելյան լանջերից մինչեւ Ծղուկ լեռ, մինչեւ Փոքր Ալ լիճ, ապա մինչեւ Որոտանի ակունքներ:

Հարունակում են անպատասխան մնալ բոլոր հարցերը, որ առաջ են եկել թուրք-ազերիների կողմից միակողմանիորեն, մեխանիկական սկզբունքով եւ անթափանց պարտադրանքով կատարված «սահմանորոշում»-ից հետո:

Կամայական «սահմանորոշման» հետեւանքով անմիջապես սահմանի վրա են հայտնվել Սյունյաց աշխարհի մի շարք քրիստոնեական սրբավայրեր, որտեղ այցելելու համար ուխտագնացներն անվտանգության երաշխիքների կարիք ունեն այլեւս:

Ի վերջո հանրությունը շարունակում է անտեղյակ մնալ, թե անվտանգության ինչ համակարգ է ներդրվում (եւ արդյո՞ք ներդրվում է) Սյունիք-Ադրբեջան արեւելյան սահմանի մոտ 300 կիլոմետրի վրա. ասում են՝ զաղտնիք է, մինչդեռ ադրբեջանական սահմանապահ կետերը, ինչպես Նշեցինք, ամեն բայլափոխի հիշեցնում են իրենց գոյության մասին:

Եվ այս պայմաններում, ասում են, Սյունիքին զարգացման հեռանկարներ, անվտանգության երաշխիքներ են խոստանում եռակողմ երկու հայտարարությունը (9 Նոյեմբերի 2020 թ., 11 հունվարի 2021 թ.):

Դրա հետ մեկտեղ, սակայն, չեն ասում, թե Ադրբեջանական երկաթուղու Օրդուբադ-Չանգեյան հատվածի վերագործարկումով, որը կանցնի Մեղրու տարածքով, Հայաստան անկախ պետությունը կունենա՞ որեւէ իշխանություն ապաշրջափակված այդ ուղու վրա, չէ՞ որ 2020 թ. Նոյեմբերի 9-ի հայտարարության համաձայն՝ երկաթգիծը կգործի ՌԴ սահմանապահների հսկողությամբ:

Կամայական «սահմանորոշման» հետեւանքով անմիջապես սահմանի վրա են հայտնվել Սյունյաց աշխարհի մի շարք քրիստոնեական սրբավայրեր, որտեղ այցելելու համար ուխտագնացներն անվտանգության երաշխիքների կարիք ունեն այլեւս:

Չեն ասում նաեւ՝ վերաբացվող երկաթգծին զուգահեռ Մեղրու տարածքով կառուցվելիք ավտոմայրուղու վրա Հայաստանը կունենա՞ որեւէ իշխանություն, թե՞ ոչ:

Չեն ասում՝ վերականգնվող երկաթգծի եւ կառուցվող ճանապարհի շուրջ ադրբեջանական եւ թուրքական կողմերը (Մեղրու տարածքում) ենթակառուցվածքներ ստեղծելու հնարավորություն կունենա՞ն, թե՞ ոչ:

Չեն ասում՝ Հայաստան անկախ պետությունում որեւէ մեկը կամ որեւէ պետական ատյան տեղա՞յ է լինելու, թե վերագործարկված երկաթգծով կամ նորաբաց ավտոմայրուղով՝ Մեղրու տարածքով, թուրքն ինչ գնե՞ր ու զինամթերք է տեղափոխելու Ադրբեջանի արեւմտյան շրջաններ՝ Հայաստանի դեմ վաղվա պատերազմում գործածելու համար:

Ինչ վերաբերում է մերօրյա ծնծախարների մատուցած հեքիաթին, թե ճանապարհների ապաշրջափակման արդյունքում Հայաստանը Պարսկաստանի հետ հաղորդակցության նոր ուղիներ կունենա... Դա սովորական մանկապույցային է: Հայաստանը Պարսկաստանին կապող հրաշալի մայրուղի ունենե՞ք՝ Մ-2 մայրուղին, որը 1991-ից գործում է անխափան (անգամ ամենասաստիկ ձնաբքի պայմաններում):

Ինչ վերաբերում է Պարսկաստանից Հայաստան (կամ հակառակ ուղղությամբ) կատարվելիք բեռնափոխադրումներին... Դժվար թե գտնվի մի վարորդ, ով Նախիջեանի տարածքով Ջուլֆա մտնելու հնարավորությունը բաց կթողի (Երեւանից երկու-երեք ժամ տեւող) եւ կօգտվի պունիքյան երթուղուց՝ մայրաքաղաքից մինչեւ սահման մոտ 10 ժամ պահանջող: Ասել է թե՛ Մ-2 մայրուղու Գորիս-Կապան-Մեղրի հատվածը (հաղորդակ-

ցության ուղիների ապաշրջափակումից հետո) այլեւս պահանջված ու շահեկան չի լինի Նախիջինի պես:

Պահանջված չեն լինի (բնականաբար) ճանապարհին կից (սյունիքյան երթուղուն զուգահեռ) երեսուն տարվա ընթացքում ստեղծված ենթակառուցվածքները, որոնք տեղի բնակչության համար սոցիալ-տնտեսական ապահովության խնդիր էին լուծում շատ թե քիչ:

Սյուն կողմից՝ գտնվելու՞ է մի հայ, ով Երեւանում նստելու է Երեւան-Մոսկվա գնացքը եւ Նախիջեանով, Օրդուբադով, Չանգեյանով, Հորադիզով, Բաքով, Դերբենդով մեկնի Ռուսաստան...

Գտնվելու՞ է մի գործարար, որ Հայաստանից իր բեռները Ռուսաստան է ուղարկելու Երեւան-Մոսկվա երկաթուղով (եւ ի՞նչ ենք արտահանելու):

Այսպիսով... Առաջին հայացքից գայթակղիչ է՝ «ապաշրջափակվելու են հաղորդակցության ուղիները» արտահայտություն-խոստումը:

Եվ դժվար թե որեւէ գիտակից մարդ (առաջին հայացքից) դեմ լինի ճանապարհների ապաշրջափակմանը, բայց... Ի՞նչ գնով, ի՞նչ զոհողություններով, զիջումներով, նվաստացումներով:

Արդյո՞ք որեւէ մեկը հաշվարկել է, թե ի՞նչ օգուտներ եւ ի՞նչ վնասներ կունենանք ապաշրջափակման առաջարկվող ծրագրից:

Ու առանց հաշվարկելու ու համեմատություններ անելու՝ հրճվանքի հանդեսներ ենք կազմակերպում:

Եվ առհասարակ՝ սա երեւի միակ դեպքն է համաշխարհային պատմության մեջ, որ դեպի հյուսիս՝ Ռուսաստան, գնալու համար ճանապարհ ենք բացում դեպի հարավ ու հպարտանում...

Ահա այսպիսի իրավիճակում ենք հայտնվել 2020 թ. Նոյեմբերի 9-ի եւ 2021 թ. հունվարի 11-ի եռակողմ հայտարարություններից հետո:

Ի՞նչ անել... Նախ՝ բոլոր սպառնալիքներով ու դժվարություններով հանդերձ, կուզենայինք բարձրաձայնել՝ հավատում ենք մեր վաղվա օրվան, հայ ազգի ապագային: Եվ դա հազարավոր սյունեցիների հաստատուն դիրքորո-

շումն է ու համոզմունքը:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում բազմիցս է հայտնվել ծանրագույն իրավիճակներում, լինել-չլինելու սպառնալիքին դեմ հանդիման, բայց ելք է գտել...


Հիմա էլ պարտավոր ենք ելք գտնել, ինչի վերաբերյալ տարբեր (եւ միմյանց լրացնող) տեսակետներ ենք լսում: Այդ ամենի մեջ, բարեբախտաբար, մի ընդհանրական տեսակետ կա՝ *մենք պետք է լինենք, Հայաստանի Հանրապետությունը պետք է լինի, որի ողնաշարը Սյունիքն է եւ միայն Սյունիքը...*

Իսկ լինելու համար, Նախեւառաջ, պետք է կանգնեցնենք գաղափրծումն ու շարունակվող ողբերգությունը, որ ապրում է հայ ազգն ու հայոց պետականությունն ամեն օր:

Պարտավոր ենք հիշել հայոց հանճարի բանաձեւը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» եւ *առաջնորդվել դրանով:*

Հ.Գ. Պատմությունը, ժամանակը Նիկոլին ու նրա գլխավորած կառավարությանն (անկախ մեր կամքից) լուսանցք են նետել...

Եվ միայն մոլորվածները կամ ողորմելիներն են ծամծմում «հանրային պահանջ», «կրիտիկական զանգված» արտահայտությունները: ...Գիտակցենք պարզագույն ճշմարտությունը՝ պատմության վճիռը բարձր է «հանրային պահանջ» շինծու արտահայտությունից: Պատմության վճիռը նույնիսկ վեր է «ժողովուրդը» ամենագոր արտահայտությունից, որը սովորաբար իշխանության լեգիտիմ աղբյուրն է:



Հակասյունիքյան նոր դավադրություն. մի՞թե իշխանությունն ասելիք չունի գաղտնագերծված նոր փաստաթղթի վերաբերյալ

Меморандум об организации безопасного движения граждан, транспортных средств и грузов по автомобильным дорогам ГОРИС – ДАВИД-БЕК и КАФАН – ЧАКАТЕН

Во исполнение пункта 9 Заявления Президента Азербайджанской Республики, Премьер-министра республики Армения и Президента Российской Федерации от 9 ноября 2020 г. с целью обеспечения безопасного движения по дорогам: **Горис – Давид-Бек** и **Кафан – Чакатен** стороны договорились о следующем:

- Армянская сторона 18 декабря 2020 г. выводит свои вооруженные формирования с территории Зангеланского и Кубатлинского районов Азербайджанкой Республики.
- Одновременно с этим, в целях обеспечения безопасного передвижения лиц, транспортных средств и грузов на участках автомобильных дорог: **Горис – Давид-Бек** от точки с координатами: 39°26'34.577" – северной широты, 46°23'42.646" – восточной долготы, до точки с координатами: 39°19'56.032" – северной широты, 46°28'03.157" – восточной долготы, и **Кафан – Чакатен** до точки с координатами: 39°12'28" – северной широты, 46°24'18" – восточной долготы до точки с координатами: 39°08'54.603" – северной широты, 46°26'33,747" – восточной долготы Пограничные войска Службы национальной безопасности Республики Армения, на армянской территории, Государственная пограничная служба Азербайджанской Республики на азербайджанской территории на удалении от дорог, обеспечивающем

- визуальное и техническое наблюдение, выставляют пограничные наряды.
- Армянская и азербайджанские стороны гарантируют безопасность движения лиц, транспортных средств и грузов по указанным дорогам, а в пределах от дорог до мест расположения пограничных нарядов отсутствие иных вооруженных формирований сторон, безопасность местного населения и пограничной инфраструктуры и на своих территориях.
 - Пограничные органы Федеральной службы безопасности Российской Федерации обеспечивают контроль на дорогах за перемещением лиц, транспортных средств и грузов осуществляют обмен актуальной информацией и доведение от сторон необходимых требований с целью соблюдения достигнутых договоренностей.
 - Азербайджанская сторона гарантирует безопасное передвижение лиц, транспортных средств и грузов Армении по автомобильной дороге: **Горис – Давид-Бек** и реализует свое право по использованию данного участка дороги от точки с координатами 39°26'34.577" – северной широты, 46°23'42.646" – восточной долготы, до точки с координатами: 39°19'56.032" – северной широты, 46°28'03.157" – восточной долготы после предварительного информирования.
 - Срок действия данного меморандума – 5 лет с автоматическим продлением на очередные 5-летние периоды, если ни одна из Сторон не заявит за 6 месяцев до истечения срока о намерении прекратить применение данного положения.
- Примечание: армянская сторона заменила слово «Кафан» на «Капан»**


Եվ անկախ մեր սիրելի-չսիրելուց, անկախ արտահերթ ընտրություններ անել-չանելուց, անկախ այն բանից, թե որքան ժամանակ Նիկոլը կմնա կառավարության շենքում, անկախ այն բանից, թե ոստիկանական հոծ շարքերն ինչպիսի ջանասիրությամբ ու որքան ժամանակ կպաշտպանեն կառավարության շենքը՝ միևնույն է՝ կա ստույգ իրողություն՝ պատմությունը Նիկոլին ու նրա կառավարությանն անդառնալիորեն կողք է դրել...

Ավելին, տպավորությունն ունենք, որ երկիրն արտաքին կառավարման է հանձնված, որ երկրի՝ դեռեւս իրենց գրասենյակներում գտնվող կառավարիչները Հայաստանի շուրջ տեղի ունեցող զարգացումների մասին տեղեկանում են մամուլից, ինչը, օրինակ, խոստովանեց

Նախագահ կոչվող Արմեն Սարգսյանը: Այդ տպավորությունն ամեն օր ամրապնդում է Ազգային ժողովը, որն իր օրակարգային հարցերով հայոց իրականության եւ հատկապես հայոց ողբերգության հետ առերեսվելու որեւէ Նշան ջույց չի տալիս: Խորհրդարանը նույնիսկ չի համարձակվում ստեղծել անկախ քննիչ հանձնաժողով՝ մեր ազգային ողբերգության ընթացքում ծագած բազմաթիվ հարցերի ու տարակուսների պատասխանը գտնելու համար: Ու եթե ստեղծված վիճակը շարունակվի, ապա ինքը՝ ժամանակը, նոր վճիռներ կկայացնի, որոնք, Աստված մի արասցե, կարող են եւ ավելի ճակատագրական լինել հայոց համար...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին



**Միրումյան Լեոն, այլևս
հայրենիք է բեզ պարտք**

Ծնվել է 1998թ. նոյեմբերի 21-ին Գորիս քաղաքում.

«Համեստ, դաստիարակված տղա էր մեր Լեոնը», – ասում են ուսուցիչները, ովքեր հպարտությամբ են նշում, որ դասավանդել են նրան, նույն հպարտությամբ ընկերներն ու հարեաններն են Լեոնին իրենց անվանում, ափսոսում, բնորոշում որպես հարգալից, հայրենասեր, բարի, խելացի, տաղանդավոր երիտասարդի: Բոլորը Լեոնի մասին խոսում են բացառապես ներկայով...

Միջնակարգ ավարտելուց հետո ընդունվել է Գորիսի պետական համալսարանի մաթեմատիկայի բաժինը (անվճար), եղել լավագույն ուսանողներից: Ընկերները գորակոչվել ու գորացրվել էին, ինքն օգտվում էր տարկետումից՝ գորակոչվելու էր ավարտելուց հետո: Երբ խոսվում էր սիրած աղջիկ ունենալու, աշխատանք գտնելու կամ այլ ծրագրերի մասին, ասում էր՝ «Ես պարտք եմ հայրենիքիս, առաջինը պարտքս պիտի տամ»:

2020թ. օգոստոսի 27-ին Լեոնը գորակոչվեց բանակ. ուրախ էր, հպարտ, որ Արցախում է ծառայելու:

Սեպտեմբերի 27-ին Լեոնը Ջրականում էր, երիտասարդը, ով խուսափում էր վեճ ու կռվից, հիմա կենաց մահու կռիվ էր տալիս, դարձել էր անողորմ ռազմիկ եւ պահանջում էր չխնայել թուրքին...

Նորակոչիկ ռազմիկը գոհվեց հոկտեմբերի 2-ին. աճյունն ամփոփված է Գորիսի պանթեոնում՝ հայրենիքը պաշտպանելիս գոհված հերոսների կողքին...



**Արշակ Հայրապետյան. «Թուրքի
հարցը մենք պիտի լուծենք, որ մեր
երեխեքը խաղաղ ապրեն»**

2013 թվականից պայմանագրային զինծառայող էր Արշակը, գիտեր հայրենիքի զինն ու խաղաղության հարգը:

Ծնվել է 1977թ. հոկտեմբերի 14-ին Սիսիանի շրջանի Տուրոս գյուղում, սովորել է Տուրոսի միջնակարգ դպրոցում, ամուսնացած էր՝ երկու որդու հայր:

Երկիր պաշտպանելը նրա մասնագիտությունն էր, զինվորական ծառայությունը՝ կենսագրության հիմնական հատվածը:

Երկրի, հողի, հայրենիքի պաշտպանն իր պարտքը կատարելիս երբեք չէր թերացել, հարգված զինծառայող էր ու սիրող հայր, ով որդիների դաստիարակության հիմքում սեփական հայրենիքի ու տան պաշտամունքն էր դրել:

Պատերազմի առաջին օրերից առաջնագծում էր, եղբորորդին ժամկետային զինծառայող էր, ու պայմանագրային զինծառայող հորեղբայրն իր պարտքն էր համարում նրա դեռատի կյանքը պահպանելը: Չանգահարում էր եղբորը՝ հանգստացնում, ասում, որ ամեն բան լավ է, ու անհանգստանալու ոչինչ չկա: Վերջին հեռախոսազանգը հոկտեմբերի 10-ին էր...

Հոկտեմբերի 14-ին Արշակի ծննդյան օրն էր, ավանդ, շնորհավորանքների փոխարեն ցավակցություններ, ուրախության փոխարեն՝ մորմոքալից կսկիծ...

Միայն ամիսներ անց՝ հունվարի 30-ին, հողին հանձնվեց Արշակի աճյունը: Հուղարկավորությանը ներկա էին նույն խրամատում կռված ընկերները, ովքեր եկել էին իրենց երախտագիտության խոսքն ասելու հերոսին՝ իրենց կյանքը փրկելու համար:

Արշակի մարմինն ամփոփված է Սիսիանի զինվորական պանթեոնում:

լայի տուն, նստել է ծանր ու մեծ, տխուր – տխուր ու չորս դուստր ունեցող Նիկոլայի կնոջն ասել. «Նիկոլայը մի ըրախա չունեցավ» ու երկար թառախ է բաշել: Հետո ծնվել է Յովիկը: Չորս աղջկա գլխին ծնված արու զավակը միշտ վայելել է ամբողջ ընտանիքի սերն ու պաշտամունքը: Սովորել է ավարտել է Գորիս քաղաքի թիվ 2 դպրոցը՝ առանձնահատուկ մանկավարժական աստղաբույյի դասավանդման տարիներին: 1983 թվականին ավարտելով դպրոցը՝ մեկնել է խորհրդային բանակ: Ծառայել է Իվանովյուր: Ավարտելուց հետո ընդունվել է Իվանովյուրի պետական համալսարանի Նախապատրաստական բաժին: Սակայն անսպառ ծնողների համառ ու երկարատե պնդումներին՝ վերադարձել է հայրենիք եւ ընդունվել ճարտարագիտական համալսարանի Գորիսի մասնաճյուղի էլեկտրամեխանիկայի ֆակուլտետ: Հաջողությամբ ավարտելով՝ աշխատել է տարբեր ոլորտներում: Հիմնական աշխատավայրը եղել է Տաթևի ճոպանուղին: Այստեղ գլխավոր ճարտարագետ-մեխանիկին բազմաթիվ պարգևատրումներ, շնորհակալագրեր ու պատվոգրեր են հանձնել անբաժիր աշխատանքի համար:



**Արեն Ավանեսյան.
անփոխարինելի**

Արենն իր կյանքի 20 տարում շատերի հարյուր տարվա կյանքի չափ հասցրեց ապրել: Նրան կարելի էր հանդիպել ամենուր՝ դպրոցի առօրյայում, հասարակական կազմակերպությունների ճամբարներում, «Impact» ծրագրի դասերը վարելիս, ակադեմիական դասընթացներին, ջերմոցում, ընտանեկան բիզնեսի հաշվապահությունն անելիս կամ վաճառքի հարցերով զբաղվելիս, բասկետբոլ եւ ֆուտբոլ խաղալիս, գյուղի երիտասարդական կյանքը կազմակերպելիս...

Ծնվել է 2000թ. նոյեմբերի 3-ին Դավիթ Բեկ գյուղում, միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ֆիզիկայի բաժին (անվճար): Մայրը փայփայում է բազմաթիվ գովասանագրերը, պատվոգրերն ու մեդալները: Սպորտը նրա տարերքն էր՝ զբաղվում էր արեւելյան մարզաձեւերով, դեղին գոտի ուներ...

Չորակոչի ժամանակ Արենը կամավոր է ընտրում ծառայության վայրը՝ Արցախ:

Բանակում նորակոչիկ, Արենը տարբերվում էր գիտելիքներով, կազմակերպվածությամբ ու լոյզվածքով: Հրամանատարության բնորոշմամբ՝ Արենն օժտված էր սպայի բոլոր հատկանիշներով: Պատրաստված, բացառիկ հայրենասեր սերժանտ էր, նրան էր վստահված դիրքի ավագ լինելու պատասխանատու պարտականությունը:

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախում սկսված պատերազմի առաջին օրվանից առաջնագծում էր, ջոկի հրամանատար Արենը կանգ չէր առնում լուսանկարվելու, անվտանգության կանոնները պահպանելու պատճառաբանությամբ՝ ուշ-ուշ էր տուն գանգահարում: Ոգետրվում էր հաջող գործերով, բայց չէր կորցնում զգուշությունը...

Ծառայության ընթացքում մայրը շատ էր խնդրել, որ արձակուրդ տան, հրամանատարները չէին թողել՝ «Արենն անփոխարինելի է, չենք կարող արձակուրդ ուղարկել»:

...Նոյեմբերի 9-ին գոհվեց Հայրուրթի գրամասի անփոխարինելի սերժանտը: Չոհվեց՝ հարազատներին թողնելով հայրենի գյուղը չքելու եւ շենացնելու պատգամը...

Առանձնահատուկ պետք է նշել Յովիկի հայրենասիրության մասին, որ սահմաններ չէր ճանաչում:

Արցախյան 1-ին պատերազմին Յովիկը մասնակցել էր անմասնորոք կատարել է իր պարտքը հայրենիքի նկատմամբ:

2005 թվականին ամուսնանալով Հասմիկ Խոյունցի հետ, կազմել է օրինակելի ընտանիք, որում սիրով մեծացրել են երեք զավակին՝ Վահենին, Նիկոլային եւ Սոֆիին:

Ապրում էր հայոց հողի յուրաքանչյուր ուրախությամբ, բառացիորեն տանջվում էր հայրենիքի ամենափոքր անհաջողությունից, եւ պատահական չէր, որ իր ժողովրդին պատուհասած դաժան պատերազմի մանրամասներին տեղյակ լինելով՝ սթափ ուղեղով, սեփական ամուր որոշումով, տղամարդկային գերագույն կամքով, կամավոր կերպով, հաշ-



**Սարգսյան Նարեկ.
բժիշկ զինվորը**

Նարեկ Սարգսյանը ծնվել է 2001թ. սեպտեմբերի 12-ին Ագարակ քաղաքում, միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում, սովորել է գերագանց: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետ:

Նարեկը բազմաթիվ երազանքներ ուներ, բազմաթիվ հետաքրքրություններ, բժիշկ դառնալու երազանքը չէր խանգարում, որ գերագանց սովորեր պատմություն, գրականություն, հայոց լեզու եւ այլ առարկաներ: Առաջին կուրսը գերագանց է ավարտել, համակուրսեցիները նրա մասին չեն կարողանում խոսել առանց արցունքների. պատմում են, որ Նարեկը պատրաստակամ էր օգնելու բոլորին, հարգալից էր, համեստ, խելացի...

2020թ. օգոստոսի 6-ին գորակոչվել է բանակ՝ ծառայել Մարտակերտում:

Գիտակից ու հայրենասիրության գաղափարով մեծացած երիտասարդի համար Արցախում զինվոր լինելը պատիվ էր: Նորակոչիկ Նարեկը մեկ պատասխան ուներ ծնողների բոլոր հարցերին՝ «լավ եմ»:

Միայն գոհվելուց հետո են ծնողներն իմացել, որ իրենց որդին հոսպիտալում է եղել՝ առողջական խնդիրներ է ունեցել:

Ծնողներից գրեթե իր խնդրել, որովհետեւ չէր կարողանում լիարժեք ապրել առանց իր գրեթե. գրեթե իրենն էին, ինքը՝ գրեթե, շատ փոքրուց էր դուրսվել գրեթե, գրեթե նրան ազատ մտածելու, սեփական խոսքն ու գաղափարներն ունենալու առանձնահատկություն էին շնորհել, որով տարբերվում էր իր հասակակիցներից:

Սեպտեմբերի 27-ին մեր հրոսակ հարեանը, պատերազմ սկսեց Հայոց Արցախի դեմ. անօդաչուի հարվածից գոհվեց Նարեկը՝ ավարտվեց բացառիկ գիտելիքներով օժտված ապագա բժշկի կենսագրությունը...

Նարեկի մարմինն ամփոփված է Ագարակի գերեզմանատանը...

վի չառնելով սրտի հետ կապված վիրահատությունները, վիրավոր հայրենիքի կանչով մեկնեց պատերազմ՝ մենակ չթողնելու 18-20 տարեկան երիտասարդ աշուժներին:

Գիշերներն անկողին մտնելուց, մինչ մեկնելը, ասում էր. «Դավաճանները գնացին բնելու»: «Մենք դավաճաններ ենք, մենակ ենք թողել 18-20 տարեկան երեխաներին, միջոցառ հայրենիքի պաշտպանությունը մեր անձնական պարտականությունն է»,–կնոջը հանգիստ, սառնասրտորեն բացատրեց Յովիկը, մորն ու քույրերին հավատացրեց, որ գործով երեւան է մեկնում ու գնաց...

Գնաց՝ որբացնելով երեք անչափահասին, կնոջը, զառամյալ մորն ու չորս քույրերին:

Մենք՝ ողջերս, այստեղ մնացածներս, պարտվեցինք:

Նա գնաց, հաղթելով սեփական վախերին, մարտի չմեկնելու սեփական ծանրալքիչ պատճառներին, Նա գնաց որպես տղամարդ եւ միացավ անպարտների, հայրենիքի Նահատակների երկնային լուսավոր գնդին:

Նա գնաց՝ հաղթանակով ավարտելով սեփական պատերազմը...

ԳՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Յովհաննես Նիկոլայի Ավետիսյան

Ծնվել է 1967թ. փետրվարի 7-ին Գորիս քաղաքում: Հայրը՝ Նիկոլայ Սեդրակի Ավետիսյանը, մանկավարժ էր, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի դասախոս, մայրը՝ Գորիսի քաղաքային մանկական գրադարանի վարիչ՝ երկուսն էլ ծնունդով Գորիսի շրջանի Տեղ գյուղից: Մեծացել է ավանդական հայկական ընտանիքում: Յովիկի ծննդյան հետ կապված ընտանեկան բազմաթիվ սիրելի եւ ուրախ պատմություններ կան: Հայտնի է Տեղ գյուղացիների ավանդական զավակապաշտությունը եւ հատկապես արու զավակին գերադասություն տալը: Պատմում են, որ գերդաստանի Նահապետը՝ Ավանես Զարուհյուն, հյուր գալով իր թոռան՝ Նիկո-



Ռիտ պատարագի...» (Գիրք հարցմանց, էջ 807):

Ահա այս խորհուրդները նկատի ունենալով՝ 2021թ. առաջին զորակոչը կատարվեց մատաղի արարողությամբ, որը սկսվեց աղի օրհնությամբ (այն կատարեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ, հոգեշնորհ Տեր Մակար վարդապետ Ջակոբյանը):

Աղի օրհնությունը եւ դրան հաջորդած պատարագը կատարվեց, ինչպես նշեցինք, Վերին Սուրբ Զոհիսիմե եկեղեցում, որ նաեւ Սուրբ Գրիգորիս է կոչվում:

Քրիստոնեական այդ ուխտատեղին գոյություն է ունեցել 4-5-րդ դարերից. կա հիմնավոր կարծիք, որ այն կառուցվել է հեթանոսական մեխյանի տեղում: Եվ բուն եկեղեցին իր տեսակի մեջ, իբրեւ միանավ կառույց, ամենամեծն է Ջայաստանում:

Գորիսի տարածաշրջանի 25 երիտասարդին Ջայոց բանակ ճանապարհելու արարողությունը համընկել էր Ջայ առաքելական եկեղեցու սրբազան տոներից մեկին՝ Տեառնընդառաջին, որ նշվում է փետրվարի 14-ին:

Այդ օրն ավանդաբար տոնում ենք Տիրոջ բառաստույթյա զայուստը Տաճար (ըստ ծննդյան տոնի, որ հունվարի 6-ն է):

Սուրբ Գրիգոր Տաթևացին պատմում է, որ «Տեառնընդառաջի տոնի համար Զուստինիանոս կայսրը երեք անգամ երուսաղեմ առաքեց մեծաբանակ զորք...Այն օրը...սբանչեյի հրաշքներ եղան. առաջին տարին ջուր բխեց մատուռի սյան մոտ, երկրորդ տարում Աստվածածնի պատկերը երեւաց սյան վրա՝ բառաստույթյա մանուկը գրկում, երկուսի ձեռքում էլ բոցազույն խաչ...» (Գիրք հարցմանց, էջ 609):

2021թվականի փետրվարի 14-ին, կարծեք, սբանչեյի հրաշք տեղի ունեցավ նաեւ Գորիսում. մեկնարկեց ծնկաչոք եղած Ջայաստանի զինված ուժերը վերստին համալրելու ու երիցս զորացնելու սրբազան գործընթացը...

Համաժողովրդական տոնախմբությունն ավարտվեց պատարագով՝ նվիրված Տեառնընդառաջին եւ Լորակոչիկների օրհնությանը: Պատարագից՝ Գորիս բաղաբի է տարածաշրջանի հոգեւոր հովիվ, արծանապատիվ Տեր Ահարոն քահանա Մելքումյանը, պատարագի ընթացքում կատարեց կրոնական բնագրերի ընթերցումներ, աղոթքներ, որոնք ուղեկցվում էին երգեցողությամբ, երաժշտությամբ, խնկարկումներով եւ ծիսական այլ արարողություններով:

Տեր Ահարոն քահանա Մելքումյանն իր աղոթքներով Բարձրալից խաղաղություն էր հայցում Արցախյան երրորդ պատերազմում նահատակված մեր զավակների հոգիների հանգստության համար, նաեւ Տիրոջից խնդրում էր հայ ժողովրդի կորսված արծանապատվության վերականգնում, հայոց բանակի վերածնունդ, հայ գերիների վերադարձ, անհետ կորած հայ զինվորների ճակատագրերի որոշակիացում, հայոց բանակ մեկնող մեր ողորդների բարեհաջող ծառայություն...

Միանալով այդ աղոթքներին եւ մեր՝ Ջայոց ազգային բանակ զորակոչվող զավակներին մաղթելով խաղաղ պայմաններում ծառայություն...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գորիսը Ջայոց ազգային բանակ ճանապարհեց իր 25 զավակին. տարվա առաջին զորակոչը՝ համաժողովրդական տոնախմբությամբ եւ մատաղի արարողությամբ

Սկիզբը՝ էջ 1

Տոնախմբության մասնակիցներին եւ, իհարկե, Լորակոչիկ մեր զավակներին ողջերթի խոսք ուղղեցին Սյունիքի մարզպետ Մելքսեթ Պողոսյանը, զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման պատվոգրեր հանձնեց Արցախյան երրորդ պատերազմի մի խումբ մասնակիցների, ովքեր Լոր-Լոր են գործընկեր Ջայոց ազգային բանակից:

Սյունիքի մարզպետ Մելքսեթ Պողոսյանը զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման պատվոգրեր հանձնեց Արցախյան երրորդ պատերազմի մի խումբ մասնակիցների, ովքեր Լոր-Լոր են գործընկեր Ջայոց ազգային բանակից:

Տոնախմբությունն ուղեկցվում էր Գորիսի մշակույթի կենտրոնի «Սյունիք» պարային համույթի (գեղարվեստական ղեկավար՝ Վահե Մելքումյան) եւ «Վահե Մելքումյան» պարային դպրոցի սաների, ինչպես եւ Գորիսի մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթի մենակատար Վաչե Մանվելյանի հրաշալի կատարումներով:

Տոնախմբության մասնակիցներին եւ Լորակոչիկներին ուղղվեց Գարեգին Նժդեհի խոսքը, որը ժամանակին Սպարապետը հղել էր թուրք զավթիչների դեմ մարտի մեկնող սյունեցի քաջերին:

Գորիսյան համաժողովրդական տոնախմբության ուղագրով բաղադրիչն էր մատաղի արարողությունը, որն իրականացվեց քրիստոնեական կարգին համահունչ:

...Գրիգոր Տաթևացին նշում է. «Մատաղը՝ նախ զոհաբերություն եւ նվեր է Աստծուն, ինչպես մատուցում էին Աբելը, Նոյը եւ Աբրահամը:

Երկրորդ՝ փրկության հույս է եւ մեղքերի թողություն:

Երրորդ՝ աղքատասիրություն է եւ ողորմություն:

Չորրորդ՝ ննջեցյալների հիշատակի համար է:

Նաեւ՝ մատաղը ստվեր եւ օրհնակ է ճշմար





Արցախի դպրոցականները Սյունիքում

Սկիզբը՝ էջ 1

քի մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանի հետ:

– **Պարոն Ավանեսյան, կարո՞ղ եք ասել՝ Արցախից տեղափոխված ընտանիքների դպրոցահասակ քանի՞ երեխա կա մարզում, նրանցից քանի՞սն են հաճախում դպրոց, քանիսը՝ ոչ:**

– Փետրվարի 2-ի դրությամբ՝ Սյունիքի մարզում հաշվառված է 724 դպրոցահասակ երեխա, նրանք բոլորն էլ հաճախում են դպրոց, ունենիւք չորս դպրոց չհաճախող երեխա, անձամբ հանդիպել եմ, ծնողների հետ զրուցել, այսօրվանից չորսն էլ հաճախում են դպրոց: Տնօրեններին հանձնարարել եմ՝ տեսական բացակայությունների դեպքում՝ անհապաղ տեղեկացնել ինձ:

Սյունիքի մարզում գործունեություն են ծավալում նաեւ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ, որոնք այժմ զբաղված են Արցախից տեղահանվածների խնդիրներով:

Արցախից տեղահանված ընտանիքներում երեխաների կրթության խնդրի մասին զրուցեցինք «Կորյո Վիժն Ֆայաստան» կազմակերպության սոցիոլոգների հետ:

– *Խնդիրը, իհարկե, առկա է, նման խնդրի բախվելիս՝ այցելում ենք ծնողներին բացատրում, որ ներկայիս վիճակում կրկնակի վնասում են իրենց երեխաներին, փորձում ենք օգնել, եթե հստակ Նշվում են դպրոց չհաճախելու պատճառները:*

Կապան խոշորացված համայնքում Արցախից տեղահանված բազմաթիվ ընտանիքների, նրանց դպրոցահասակ երեխաների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ զրուցեցինք Կապան համայնքի ղեկավարի տեղակալ Մարտա Չարությունյանի հետ, ով մասնավորապես ասաց.

«Եթե տեղեկանում ենք նման դեպքի մասին, անմիջապես արձագանքում ենք: Անձամբ եմ զբաղվում նման հարցերով, կոնկրետ ժամկետի՝ 1-2 օրվա պահանջ եմ դնում, որ երեխային տեղավորեն մոտակա դպրոցում»:

Սեպտեմբերի 27-ին ԱՀ Նախագահ Արախիկ Չարությունյանի հրամանով Արցախի բոլոր դպրոցներում կրթությունը դադարեցվեց. պատերազմի հետեանկբով՝ 110 կրթօջախի 8155 աշակերտ կորցրեց հարազատ դպրոցում կրթությունը շարունակելու հնարավորությունը...

Արցախից տեղահանված դպրոցական երեխաների համար Սյունիքի մարզում ստեղծված են բոլոր պայմանները, որպեսզի նրանք դուրս չմնան կրթական գործընթացից, բայց անորոշությունն ու ապագայի հանդեպ հավատի կորուստը որոշ ընտանիքներում երկրորդ պլան են մղել կրթությունը: Խնդիրն իրենց օրակարգում պահող մեր բազմաթիվ զրուցակիցների կոչն է՝ «Երեխային դպրոց ուղարկելու հարցում խոչընդոտների հանդիպելիս ոչ թե ընտրել երեխայի կրթության իրավունքի ոտնահարման ուղին, այլ տեղեկացնել պատկան մարմիններին եւ գտնել լուծում»:

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Սյունիքի տարածաշրջանում Հայաստան-Իրան ուղղակի ճանապարհային կապին մի քանի վտանգ է սպառնում. Վարդան Ռսկանյան

Սկիզբը՝ էջ 3

յացի Ադրբեջանի ճանապարհով Հայաստանի կապը Ռուսաստանի հետ ապահովելուն միտված ադրբեջանական ջանքերը:

Ադրբեջանը կցանկանար, որպեսզի այդ ճանապարհը գործեր, եւ նա վերահսկողություն ունենար դրա նկատմամբ, իսկ եթե Աբխազական երկաթուղին սկսի գործել, ապա ադրբեջանական հատվածը, որ ավելի երկար է՝ տնտեսական իմաստով այն ձեռնտու է համեմատության մեջ, եւ նաեւ անվտանգային առումով, բնականաբար, մեզ համար շատ ավելի նպաստավոր է, եթե մեր կապն ապահովվի ոչ թե Ադրբեջանի միջոցով, այլ Վրաստանի եւ Աբխազիայի միջոցով:

Երկրորդ ուղղվածությունը՝ սա գալիս է շարունակելու եւ ապահովելու Իրանի հետ կապը, այսինքն՝ այդ միջոցով իրանցիները եյ կտանան Ցուֆա, Նախիջեւան, Երեւան, Թբիլիսի, Աբխազիա, Ռուսաստան եւ փաստացիորեն կապահովվի Իրանի կապը Ռուսաստան եւ Իրանի ճանապարհով՝ նաեւ դեպի Պարսից ծոցի նավահանգիստներ, այսինքն՝ երկաթուղային հաղորդակցության այն ճանապարհահատվածը, որի գործարկման հարցում շատ շահագրգիռ է Ադրբեջանը, եւ որը ենթադրում է, որ ՌԴ-Իրան կապը պետք է ապահովվի հենց Ադրբեջանի տարածքով, Նույնպես զգալիորեն կկորցնի իր արդիականությունը՝ հաշվի առնելով նաեւ մեկ այլ կարեւոր հանգամանք՝ եթե աբխազական երկաթուղին եւ Նախիջեւանյան հատվածը բացվի, այստեղ մենք տեխնիկական խնդիրներ չունենք, այսինքն՝ ըստ Էուպյան երկաթուղին անգործության է մատնված ոչ թե տեխնիկական պատճառներից, այլ աշխարհաբաղաբական խնդիրներից ելնելով:

Միևչդեռ Ադրբեջանն Իրանին կապող երկաթուղու Ռաշտ-Աստարա հատվածը դեռեւս կառուցված չէ, այսինքն՝ այդ հատվածում երկաթուղի չկա, դա պետք է նոր կառուցվի: Ուստի աբխազական երկաթուղու բացումը Հայաստանի համար չափազանց կարեւոր է, եւ կարծում եմ, որ մենք պետք է այդ ուղղությամբ շատ ինտենսիվ աշխատանք տանենք, որովհետեւ դա ըստ Էուպյան թույլ կտա բարելավելու աշխարհաբաղաբական այն պայմանները, որոնցում մենք հայտնվել ենք այս տարածաշրջանում վերջին փոփոխություններից հետո:

– **Վրաստանը, ըստ Ձեզ, պատրա՞ստ է շրջանցել իր համար անհաղթահարելի համարվող քաղաքական խնդիրները Ռուսաստանի հետ՝ հանուն Հայաստանի շահի, սա շատ լուրջ հարց է Վրաստանի համար:**

– Այո, Վրաստանի համար խնդրահարույց է Աբխազական երկաթուղու վերաշահագործումը, բայց այստեղ կա մի կարեւոր հանգամանք: Տեսեք, Վրաստանն այս ապաշրջափակման ամբողջ ծրագրի շրջանակներում, ըստ Էուպյան, կարող է կորցնել իր տարանցիկ դերակատարությունը, որն այժմ ունի: Կարծում եմ, վրացական կողմն էլ պետք է մտածի ելքեր՝ իր դիրքերն ամրապնդելու համար, եւ սա կարող է լինել այդ ելքերից մեկը:

– **Ենթադրվում է, որ Վրաստանը կտուժի Նախիջեւանի միջանցքի ձեւավորումից հետո, երբ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին այլեւս գրավիչ չի լինի Թուրքիայի եւ Ադրբեջանի համար, ու շրջանառությունն էապես կնվազի: Սակայն վրացական քաղաքագիտական շրջանակները պնդում են, որ Բաքու-Թբիլիսի-Կարսը շատ փոքր ծավալներով է աշխատում Վրաստանի շրջանառության համեմատությամբ, եւ այդ կորուստը քա-**

ղաքական խնդիրների վրա աչք փակելու համար բավարար չէ:

– Բնականաբար, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին ավելի շատ քաղաքական պրոյեկտ է, քան տնտեսական: Բացի այդ, կարծում եմ, Վրաստանում, համեմայն դեպս՝ իշխանական վերնախավում, կա շերտ, որը, մեղմ ասած, խանդավառ չէ ադրբեջանական բավական զգալի ներկայությունից այս երկրում: Իսկ նման շյուսիս-Հարավ առանցքի ձեւավորումն Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան, Իրան-Հայաստան-Վրաստան-Սեւ ծով երթուղիներով՝ Վրաստանի համար կարող է ստեղծել Նույնպես ավելի բարենպաստ աշխարհաբաղաբական պայմաններ՝ ազատվելու համար գոնե որոշակի հատվածում թուրք-ադրբեջանական ազդեցությունից:

– **Քաղաքական մակարդակում ինչպե՞ս պետք է աշխատել Վրաստանի հետ Աբխազական երկաթուղու հարցում համաձայնություն ստանալու նպատակով:**

– Պետք է ինտենսիվ աշխատել: Դրանք պետք է լինեն թե երկկողմ ձեւաչափով, թե նաեւ ներգրավելով այլ խաղացողների: Այստեղ չափազանց կարեւոր կարող է լինել նաեւ ԱՄՆ դիրքորոշումը, եւ Հայաստանը գազահեռաբար պետք է աշխատի ԱՄՆ-ի եւ, բնականաբար, մեր դաշնակից ՌԴ-ի հետ՝ ստեղծելով հետաքրքիր ձեւաչափ, որտեղ, անշուշտ, կարող են լինել շահերի բախումներ, բայց կարող են լինել նաեւ շահերի հատման կետեր, եւ այդ հատման կետերն ապահովելուն միտված պետք է լինի մեր գործողությունների ողջ տիրույթը:

Պետք է գոնե օգտագործել առկա հնարավորությունները, որոնք կարող են բարելավել մեր աշխարհաբաղաբական վիճակը այս տարածաշրջանում եւ թույլ տալ Հայաստանին հանդես գալ, որոշակի դեպքերում, կոշտ դիրքորոշումներով՝ Նույն այդ թուրակական միջանցքի համատեքստում:

– **Իրանի դիրքորոշումը տարածաշրջանային ապաշրջափակման պրոյեկտներում հաշվի առնվո՞ւմ է: Տպավորությո՞ւնն է, որ չնայած Իրանի վերջին շրջանի ակտիվությանը, հարցերը լուծվում են եւ քննարկվում են պրոյեկտներ՝ Իրանի շահերը շրջանցելով:**

– Իրանցիներն անում են իրենցից կախված գրեթե ամեն ինչ, որպեսզի ապահովեն իրանական ներկայությունը Հարավային Կովկասում ընթացող զարգացումներում: Անշուշտ, գործողությունները կարելի է գնահատել մի փոքր ուշացած եւ դանդաղկուտ, բայց համեմայն դեպս, հաշվի առնելով Իրանի տարածաշրջանային խնդիրների բազմաթիվ լինելը, իրանական ուշադրությունը Հարավային Կովկասի նկատմամբ զգալիորեն աճել է, եւ այս տարածաշրջանը ստացել է ավելի առաջնային կարգավիճակ իրանական շահերի տեսանկյունից:

Սյուն կողմից ուշագրավ է, որ իրանցիները բավականին ինտենսիվ աշխատում են ռուսական կողմի հետ, եւ ռուս-իրանական գործակցության համատեքստում, կարծում եմ, Հայաստանը եւս կարող է անելիքներ ունենալ՝ ինչ-որ առումով դառնալով հարթակ՝ մեղմելու համար այն բոլոր հնարավոր ոչ համընկնումները, այսպես ասեմ, որոնք, հնարավոր է՝ լինեն ռուս-իրանական հարաբերություններում: Այսինքն՝ ըստ Էուպյան մենք կարող ենք դառնալ հարթակ ռուս-իրանական հարաբերությունների համատեքստում:

– **Նշում եք, որ Իրանը դեմ է միջանցքին, ինչ լծակներ ունի ազդելու այդ քննարկումների վրա, դրանք ըստ Էուպյան տեղի են ունենում, արդե՞ս ամեն բան**

որոշված է կարծես:

– Հզիտեմ, թե որքանով Իրանի դիրքորոշումը հաշվի կառնվի, բայց իրանցիները հստակորեն արձանագրել են ՀՀ տարածքային ամբողջականության խնդիրը՝ որպես իրենց շահերի տեսանկյունից կարմիր գիծ: Այսինքն՝ բավական հստակ եւ խիստ բնորոշում է տրվել: Ցանկացած միջանցքի գոյություն խաթարում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը կամ գոնե սպառնալիք է ստեղծում դրա համար: Հետեւաբար, կարծում եմ, այս հարցում իրանական դիրքորոշումները հնարավորին կոշտ են լինելու: Որքանով դրանք կազդեն ընդհանուր գործընթացի վրա, դժվար է կանխատեսել, բայց ամեն դեպքում պետք է ի նկատի ունենալ, որ հաղորդակցության ուղիների բացմանն իրանցիները դեմ չեն, այսինքն՝ եթե Նախիջեւան-Ադրբեջան կապն ապահովվի Հայաստանի վրայով ոչ միջանցքային կարգավիճակով, ապա իրանցիները դրան դեմ չեն լինի՝ չնայած դա խաթարում է Իրանի շահերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրանցիները կորցնում են կարեւոր լծակ՝ Նախիջեւանի եւ Ադրբեջանի այն ցամաքային ճանապարհը, որով հենց հիմա էլ Նախիջեւանը կապվում է Ադրբեջանի հետ, եւ որն անցնում է Իրանով: Բայց գոնե հայտարարությունների մակարդակով իրանցիները պնդում են, որ դեմ չեն ապաշրջափակմանը:

– **Ձեր խոսքի սկզբում ասացիք, որ Սյունիքով Հայաստան-Իրան հաղորդակցությունը պետք է անպայմանորեն պահպանվի: Ի՞նչ վտանգներ կան այդ հաղորդակցության համար:**

– Ընդհանրապես Սյունիքի տարածաշրջանում Հայաստան-Իրան ուղղակի ճանապարհային կապին մի քանի վտանգ է սպառնում որոշ հատվածներում: Խոսքը վերաբերում է Գորիսից Կապան ընկած հատվածին հատկապես, որտեղ, ըստ Էուպյան, բանավոր կամ, հիմա էլ կասկածում են, գրավոր ըմբռնում կա Բաքվի բռնապետի հետ, ինչի հետեւանքով վտանգվում է Հայաստան-Իրան ուղղակի եւ անմիջական կապը Սյունիքի տարածաշրջանով՝ հատկապես Ռոտատանի, Շուտ-Նուխի եւ Կապանի հատվածներում: Ուստի այս իմաստով պետք է հստակ արձանագրենք եւ հստակ հայտարարենք, որ ՀՀ-ի համար կան կարմիր գծեր, եւ դրանցից մեկը Հայաստան-Իրան ուղղակի հաղորդակցության ապահովումն է, անվտանգ հաղորդակցության ապահովումը: Այդ հաղորդակցության վրա որեւէ վերահսկողություն սահմանելու որեւէ գործողություն կամ որեւէ ինտերաբանություն մակարդակում արտահայտություն, քարոզչական մակարդակում գործողություն պետք է ստանա հնարավորինս կոշտ արձագանք, եւ պետք է բացառվի նման գործողությունների հնարավորության ռիսկը մեզ համար կենսական նշանակություն ունեցող այս հատվածներում:

– **Ուշագրավ էր, որ փետրվարի սկզբին Ավինյանը Հայաստանում Իրանի դեսպան Աբբաս Բադախշան Չոհուրիի հետ քննարկել է «Պարսից ծոց-Սեւ ծով» տրանսպորտային միջանցքի ծրագիրը, որից Դուք խոսեցիք: Այսինքն՝ հնարավոր է՝ այս ծրագիրը եւս քննարկվի ապաշրջափակման համատեքստում:**

– Իրանցիները չափազանց շահագրգիռ են այս ծրագրի իրականացմամբ, բայց կրկնեմ, որ դա պետք է իր մեջ ներառի Սյունիքի մարզով ավտոճանապարհը, եւ դա պետք է լինի որակյալ, եւ որեւէ կերպ չպետք է մոռացության եւ անուշադրության մատնել:

##

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՐ ԳՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԵՄԱՐ» ՍԱՀՄԱՆԱԲԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՐ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

☎ 3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Զահումյան 20/32:
📞 (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
✉ syuniacyerkir@mail.ru
🌐 www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Երկրորդ ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՐՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թ՝ Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.02.2021թ.: